

ՀՀ արտաքին քաղաքականության հարցերի արժարժույթը
Ավետիս Ահարոնյանի Փարիզից ու Սան Ռեմոյից
ուղարկված նամակներում

1920թ. գարնանը ՀՀ իշխանությունների առջև խոյացել էին լուծում պահանջող մի քանի կարևոր խնդիրներ, որոնցից էին. 1) ՀՀ-խորհրդային Ռուսաստան, 2) ՀՀ-Դաշնակից երկրներ և 3) Հայաստան-Վրաստան փոխհարաբերությունները: Սույն հրապարակման նպատակն է լուսաբանել նշյալ փոխհարաբերությունների որոշ հարցերը:

Վերոհիշյալ ժամանակաշրջանում էապես փոխվել էր քաղաքական իրավիճակը նախկին ռուսական կայսրության տարածքում: 1917թ. հոկտեմբերին դառնալով կառավարող ուժ, բոլշևիկյան իշխանությունը ոչ միայն չպարտվեց քաղաքացիական պատերազմում, այլ ավելին՝ 1920թ. գարնանը ամրացավ Հյուսիսային Կովկասում: Այդ փաստը չէր կարող չանհանգստացնել ՀՀ իշխանություններին: Այդ ժամանակ էլ խորհրդային Ռուսաստանի նկատմամբ ՀՀ իշխող վերնախավի մոտ ձևավորվեց երկու մոտեցում. առաջին՝ չափավոր գծի կողմնակիցներ Ա.Խատիսյանը, Ա.Ա. հարոնյանը և այլոք խելամիտ չէին համարում պայքարել խորհրդային Ռուսաստանի առաջխաղացման դեմ և ձգտում էին բանակցությունների միջոցով հասնել վերջինիս ՀՀ-ի անկախության ճանաչմանը, իսկ ընդգրծված արևմտամետ դիրքորոշում ունեցող արմատական գծի կողմնակիցներ Ռ.Տեր-Մինասյանը, Հ.Օհանջանյանը և ուրիշները, որոնց աջակցում էր Անգլիան, խորհրդային Ռուսաստանի նկատմամբ դրսևորեցին խիստ թշնամական դիրքորոշում: Այս գծի կողմնակիցները, տարբեր պատճառաբանություններով, արտասահման գործուղեցին չափավոր գծի ներկայացուցիչներին և, որպես արդյունք, ամրապնդեցին իրենց դիրքերը ինչպես պետական կառավարման մարմիններում, այնպես էլ՝ բանակում: Իրենց հակառուսական տրամադրություններով հանդերձ, արմատականները, այնուամենայնիվ, չեն շահել իրենց հովանավորող Անգլիայի պետական անձանց համակրանքը: Վերջիններս խիստ դժգոհում էին արմատական գծի կողմնակիցների հակաադրբեջանական քաղաքականությունից: Ավելին, Անգլիան ձգտում էր հասնել Ռ.Տեր-Մինասյանի պաշտոնաթողության: Մինչդեռ, ՀՀ-ի ղեկավար արևմտամետ արմատական գործիչները, ի հակառակ 1920թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլում անցկացրած խորհրդակցության կոչերին*, իրենց հավատարմությունը հայտնեցին Անտանտին: Նպատակը մեկն էր՝ չզրկվել իրենց խոստացված Բրիտանիայի տրամադրվելիք զենքից, Դաշնակիցների կողմից ՀՀ նոր՝ ցանկալի սահմանների ձևավորման ձևավորումից և ամերիկյան պարենային օգնությունից:

Սույն հրապարակմամբ ցանկանում ենք նաև մասնակի ներկայացնել

* 1920թ. ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի 5 կուսակցությունների (դաշնակցականներ, ռամկավարներ, էսերներ, Հայ ժողովրդական կուսակցություն և սպեցիֆիկներ) տարածքային ներկայացուցիչների խորհրդակցություն, որի ժամանակ նրանք առաջարկեցին ՀՀ իշխանություններին խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել:

Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ ՀՀ-Դաշնակից երկրների միջև ընթացող քննարկումները:

1920թ. գարնանը կտրուկ սրվեց Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերությունները: Ադրբեջանական իշխանությունները նույն թվականի մարտի 20-ից սկսեցին զինաթափել Ղարաբաղի հայ բնակչությանը և պահանջեցին լիակատար ենթակայություն: Բնականաբար, Ադրբեջանի այդ քաղաքականությունը հանգեցրեց ռազմական գործողությունների վերսկսմանը, որի արդյունքում ամսի 23-ին ոչնչացվեց հայկական Շուշին. ադրբեջանական բանակը, գրավելով քաղաքը, հրկիզեց այն և կոտորեց տեղի հայ բնակչությանը: Ադրբեջանի կառավարությունը ռազմական գործողությունների վերսկսման ողջ մեղքը բարդեց ՀՀ ղեկավարության, հատկապես՝ արմատական գծի կողմնակիցների վրա: Ավելին, //56 Դաշնակից երկրների որոշ գործիչներ, մասնավորապես՝ Անգլիայի ԱԳՆ աշխատակից, Բաքվում նախկին փոխ-հյուպատոս Է.Մաք-Դոնելլը պահանջում էր իշխանությունից հեռացնել Դ. Կանայանին և Հ.Սրվանցյանին: Միաժամանակ, բրիտանական կողմը անուշադրության էր մատնում ՀՀ իշխանությունների դիմումները՝ ձերբակալել կամ Ադրբեջանից վտարել օսմանյան բանակի նախկին հրամանատարներ Նուրի փաշային և Խալիլ բեյին:

Անկախության հռչակման առաջին իսկ օրվանից ՀՀ-ն տարածքային վիճելի խնդիրներ է ունեցել հարևանների հետ, որոնք իրենց լուծում չէին գտել նաև 1920թ.: Այդ հարցերը գտնվում էին Դաշնակից երկրների ուշադրության ներքո և վերջիններս իրենց տեսակետը ունեին դրանց վերաբերյալ: Մասնավորապես, Անգլիան Ձանգեզուրը, Նախիջևանը և Կարսի մարզը ճանաչում էր որպես ՀՀ անբաժանելի մաս, իսկ Ղարաբաղի հարցում պնդում էր որպեսզի այն ենթարկվի Ադրբեջանին: 1920թ. մարտի 5-ին, հանդես գալով Անգլիայի անունից, Ջ.Ուորդրոպը առաջարկեց տարածքային վիճելի հարցերը լուծել Դաշնակիցների իրավարարությամբ: Ապրիլի 8-ին Ջ.Քերզոնը առաջարկեց իրենց իրավասությունը տարածել նաև Անդրկովկասում առկա տարածքային բոլոր վիճելի հարցերի վրա: Սակայն, կարճ ժամանակ անց, Անգլիան հետ կանգնեց այդ տեսակետից և առաջարկեց իրավարարության հարցին անդրադառնալ Սևրի պայմանագրի կնքումից հետո: Նշենք նաև, որ Վրաստանը և Ադրբեջանը չեն հավանել տարածքային վիճելի հարցերը իրավարարությամբ լուծելու ՀՀ մտադրությունը: Այդ ժամանակահատվածում վիճելի տարածքների պատկանելիության հարցը քննարկման առարկա էր հանդիսանում Թիֆլիսում, Փարիզում և Սան Ռեմոյում ընթացող բանակցություններում: Մասնավորապես, Սան Ռեմոյում ընթացող բանավեճերի ժամանակ Դաշնակից երկրների պետական անձինք կարևորեցին Հայաստանի՝ դեպի Սև ծով ազատ դուրս գալու հնարավորությունը: Վրացական կողմը խոստացավ ապահովել երկաթուղային անարգել տարանցում ապրանքաշրջանառություն իրականացնելու համար: Միաժամանակ, Վրաստանի պատվիրակությունը, ինչպես տարածքային առկա վիճելի հարցերի, այնպես էլ՝ պարտադրող իրավարարության հեռանկարի քննարկումը հետաձգեց, մինչև որ վերջնականապես կվորոշվեր Բաթումի մարզի

պատկանելիությունը:

Վավերագրերը ներկայացնում ենք արդի ուղղագրությամբ և կետադրական որոշ շտկումներով:

N° 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա.ԱՐԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԵՐԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՍՐԱՊՆԴՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 ապրիլի 1920թ., Փարիզ

«Ամսիս 8-ին Տարանտոից¹ մեկնեց դեպի Ձեզ մեր սուրհանդակ պ. բժիշկ Տ.Չալյանը², ուղարկում են հաջորդ սուրհանդակը, որ Տարանտոից նավ կնստի ապրիլի 17-ին, այսինքն նախընթաց սուրհանդակից երկու շաբաթ հետո: Մեր հարցի այս եռուն շրջանում ես նյութական արտակարգ զոհաբերություններ հանձն առա Լոնդոնից բազմաթիվ հեռագրերով և կրկնակի սուրհանդակներով Ձեզ իրազեկ պահել: Շատ պիտի ցավիմ, եթե Լոնդոնից դրկածս հեռագիրները Ձեզ չհասնին: Նրանց թիվը 8-ից անց է և մեծ մասամբ հունական ու իտալական //-57 միսսիաներին* են հանձնել - վերջինը անգլիացիներին, լորդ Ջ.Քերզոնի զրույցի մասին:

Պաշտոնական նամակումս գրեցի, որ անծանոթ եմ տեղիդ անցուդարձին: Դա մեր վիճակի ամենացավալի կողմն է: Գործում ենք կույր-կուրույն և հաճախ աններդաշնակ Ձեզ հետ: Եթե Ձեր հեռագրերը չեն հասնում ինձ, ինչ որ շատ հնարավոր է - ի՞նչ արգելք կա գեթ այս բաղդորոշ օրերում սուրհանդակներ փութացնեք թեկուզ Կ.Պոլիս, որտեղից շատ հաճախ վստահելի եկողներ կան, հակառակ դեպքում ի՞նչ արգելք կա, որ Ձեր սուրհանդակը մինչև Փարիզ հասնի և մեր պատասխանը Ձեզ բերի: Այստեղ գալու ծախքը Դուք հոգացեք, վերադարձին ես կվճարեմ, խնդրում եմ այս իրագործել. դա շատ ու շատ անհրաժեշտ է այս օրերում: Բոլոր նշաններից երևում է, քո նամակումն էլ ակնարկ կար, որ բոլշևիկները առաջանում են դեպի Անդրկովկաս: Անցյալ օրը** [ԱԳՆ-ում] հաղորդեցին, թե բոլշևիկները շատ հեռու չեն Բաթումից, որի գրավումը անխուսափելի է: Թերթերը նույնպես ամեն օր հաստատում են բոլշևիկների առաջխաղացումը: Ոչ ցավելու, ոչ ուրախանալու պատճառ ունինք: Ծանրակշիռ քաղաքական փաստ է այս, որ պիտի հաշվի առնինք և հարմարվինք ստեղծվելիք նոր պայմաններին: Բոլոր պետությունները - և առաջին հերթին Անգլիան տնտեսության անհրաժեշտության պատրվակի տակ, սկսել են սովետների^{3*} հետ գրեթե քաղաքական հարաբերություններ: Բանն այնտեղ հասավ, որ անցյալ օրը^{4*} Լոնդոնում պարսկական^{5*} ար-

* Դիվանագիտական ներկայացուցչություններին:

** Այն է. 1920թ. ապրիլի 11-ին:

^{3*} Խորհրդային Ռուսաստանի հետ:

^{4*} Ա.Ահարոնյանը Լոնդոնից Փարիզ է մեկնել ապրիլի 11-ին, այսպես որ նշված հարցազրույցը պետք է տեղի ունենար ապրիլի 10-ին կամ 11-ին:

^{5*} Պարսկաստանի:

տաքին գործերի նախարար պրինց^{6*} Փիրուզը հնարավոր գտավ ինտերվյու^{7*} տալ և հայտարարել, թե Պարսկաստանը դիտավորություն ունի շուտով բարի հարաբերություններ մշակել սովետների հետ: Անշուշտ պարսից նախարարի այս նշանակալից հայտարարությունը Լոնդոնում առանց բրիտանական [կառավարության] գիտության չէ:

Մեծ պետությունների^{8*} օրինակին հետևելով, Ռուսաստանից անջատված մանր պետությունները նույնպես աշխատում են բուլշևիկների հետ բանակցության մեջ մտնել: Բալթյան պետություններից հետո Լեհաստանն է զրույց սկսել. չեն զարմանա, եթե վրացիքն ու թաթարներն^{9*} էլ մարդիկ դրկած լինին Մոսկվա: Անգլիան քաջալերում է բոլոր այս համաձայնությունները: Իտալիան ևս առավել: Ֆրանսիան վարանում է, բայց այստեղ էլ ձայներ են լսվում անգամ պահպանողական բանակում, թե սխալ էր Կոլչակ-Դենիկինյան քաղաքականությունը³, ժամանակ է նոր ճամբաներ որոնել Լեհաստանին մոտենալու համար⁴: Դեպի բուլշևիկներն սկսած հարաբերության այս փոփոխությունը պետք է բացատրել նրանով, որ խաղաղությունն անհնարին է թվում առանց Ռուսաստանի: Քաղաքականապես՝ որովհետև Ռուսաստանն իր խոսքն ունի Արևելյան խնդրում⁵ Պոլսի և նեղուցների հարցում, նոր կազմված մանր պետությունների⁶ ապագան տնօրինելիս: Տնտեսապես՝ որովհետև Ռուսաստանը ահագին շտեմարան է, որ այսօր փակ է և այս պարագան անձնապես անդրադառնում է Եվրոպայի ընդհանուր կացության վրա: Եվ, որովհետև չափավոր տարրերը⁷ Ռուսաստանում ցարդ չկարողացան որևէ կառավարություն կազմել, մնում է ընդունիլ բուլշևիկյան կառավարությունը որպես փաստորեն գոյություն ունեցող: Այս է դրությունը. մեզ թվում է, որ ներկա պայմաններում դուք ևս ինչպես ամենքը ստիպված պիտի լինիք բուլշևիկ-/-58 ների հետ զրույց սկսել, որպեսզի Կովկասը մտնելիս գեթ մեր՝ վերաբերմամբ բարյացակամ լինին: Ֆորմուլան ** պարզ է - մենք ոչ բուլշևիկ ենք - և ոչ հակաբուլշևիկ: Մեր թափած ահագին արյունը և մեր անխախտ բարյացականությունը դեպի Ռուսիա պետք է, որ արժեցնել սովետների^{3*} առաջ: Նկատի պիտի առնեն նաև, որ իրենք արդեն ճանաչել են Թուրքահայաստանը, մեծ կարևորություն չէ ճանաչել անդրկովկասյան փոքրիկ հայ հողամասի⁸ միացումը առաջինին: Այսպես թե այնպես, սովետների հետ զրույցը պետք է սկսել գաղտնի կերպով:

Ջերմ բարևներով, Ջեր Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.107-108: Բնագիր: Մեքենագիր:

^{6*} Արքայազն:

^{7*} Հարցազրույց:

^{8*} Վեհաժողովում այդ կարգավիճակը ունեին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, ճապոնիան ու ԱՄՆ-ը:

^{9*} Այդ տարիներին ադրբեջանցիները կոչվում էին Կովկասի թաթարներ:

* ՀՀ իշխանությունների:

** Բանաձև:

^{3*} Խորհրդային իշխանության:

N° 2

ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
 ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝
 ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ
 ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 ապրիլի 1920թ., Փարիզ⁹

«Ներկայացնելով այս ապրիլ 8-ին Լոնդոնում Լորդ Ջ.Քերզոնի¹⁰ հետ ունեցած տեսակցության համառոտ արձանագրությունը, պարտք են համարում այստեղ վերհանել մի քանի դիտողություններ և լուսաբանություններ: 1) Ինչպես նկատում եք, լորդ Ջ.Քերզոնը սպառնաց մեզ զենք չտալ, եթե չդադարեցնենք թաթարների ջարդը¹¹, հակառակ իմ բուռն բացատրության, թե երբեք այդպիսի ջարդեր տեղի չեն ունեցել: Լորդի այդպիսի հայտարարությունը թվում է անհետևողական և տարօրինակ, քանի որ ինքը՝ մի ամիս առաջ Լորդերի պալատում հայտարարելով հանդերձ, թե հայերը գառնուկն չեն, արյունհեղ և վայրագ հարձակումներ են անում թաթարների դեմ, մի քանի օր մեզ պաշտոնապես գրեց, թե բրիտանական կառավարությունը որոշել է հայ բանակը զինել և ռազմամթերք տալ նրան: Նույնը հայտարարեց Դ.Լլոյդ Ջորջը Համայնքների պալատում մի քանի շաբաթ առաջ. արդ՝ եթե այն ժամանակ մեզ վերագրված թաթարական ջարդերը, արգելք չեղան մեզ զենք տալու որոշման, ինչու՞ հանկարծ այսօր այդպիսի հանկարծական փոփոխություն, երբ ոչինչ նոր բացի Ջ.Ուորդրոպի¹² մի նամակից, թե հայերի և թե թաթարների մեջ մեծ ընդհարումներ կան: Կտրված լինելով ձեզնից և անձանոթ այդտեղի նոր անցուղարձին, ես ենթադրում եմ. կամ բրիտանական կառավարությունը հույսը կորցրել է, թե կովկասյան ժողովուրդները՝ և մասնավորապես հայերը բուլշևիկների դեմ կերթան, և այս պատճառով անօգուտ է համարում մեզ զենք տալ, կամ Ղարաբաղում ու Ջանգեզուրում նոր անցքեր են տեղի ունեցել հօգուտ մեզ և անհամապատասխան բրիտանական հայեցակետների, ուստի մեզ զենք մերժելով աշխատում են մեզ ճնշել և հետ քաշել:

Այսպես, թե այնպես Ջ.Քերզոնի հայտարարությունը թվում է ինձ ոչ առանց հետին մտքի:

2) Մասնավորապես Դրոյի¹³ և Համազասպի¹⁴ անունների վրա կանգ առնելը, ըստ իս, թաթար ու վրացական ներշնչումն է, որ արված է Ջ.Ուորդրոպին. Ա.Գյուլխանդանյանը¹⁵ խառնված է նրանց որպես ներքին գործոց նախարար:

Ջ.Ուորդրոպը ինքը անշուշտ զոհ է թաթար ու վրացական ինտրիգի^{4*}: Նրան պետք է բացատրել այդ: Ամսիս 9-ին, Ձեզ ուղղածս հեռագրի մեջ աշխատելով //59 հարազատորեն հաղորդել Ձեզ լորդ Ջ.Քերզոնի հայտարարության էական մասը, ես խույս տվի մեր երեք ականավոր գործիչների՝* արձակելու պահանջն ևս հայտնել, վախենալով թե միգուցե դուք առնեք և իրագործեք այն, ըստ իս, այդպիսի պահանջը անգլիական

^{4*} Բանասարկության:

* Խոսքը վերոհիշյալ Դ.Կանայանի, Հ.Սրվանձոյանի և Ա.Գյուլխանդանյանի մասին է:

արտաքին գործոց նախարարի կողմից չափազանց է և չի արդարացնում ցարդ անգլիական կառավարության մեր բազմապիսի թշվառությունների հանդեպ ցուցահանած բացարձակ անտարբերությամբ: Բրիտանական կառավարության խոստումներն ունենք միայն, բայց գործ չտեսանք տակավին: Ծշմարիտ է. անցած երկու ամիսը Լոնդոնում մենք լավագույն մթնոլորտի մեջ աշխատել ենք, բայց կրկնում են. գործնական արդյունքը դեռ չկա և հետո Անդրանիկի Ձանգեզուրից հեռանալու¹⁶ փաստն ապացուցում է, որ երբ մենք հեռանում ենք, մեր ժողովուրդն ու հողը հանձնում ենք թաթարներին:

Եվ հետո, եթե մենք այսօր համակերպվենք և հեռացնենք ասպարեզից մեր աչքի ընկնող գործիչներին, ոչ մի երաշխիք չունինք, որ վաղը չեն պահանջի հեռացնել և ամբողջ նախարարական կազմը, և պառլամենտը: Մենք շատ թանկ գնով ենք ձեռք բերել անկախությունը՝ այսպես խաղալիք դառնալու օտարներին, թեկուզ այդ օտարը լինի մեզ բարյացակամ մեկը:

Այն ժամանակ, երբ թաթարը իսկական արյունարբու ջարդարարները Խ.Սուլթանով¹⁷, Ֆ.Խան-Խոյսկի¹⁸, Բ.Ջիվանջիր¹⁹ և այլն, եղբայրացած թուրք նույնպիսի ջարդարարների հետ, շարունակում են իրենց շահատակությունները և բրիտանական կառավարությունը տակավին հնար չգտավ այդ վտանգավոր ոհմակից ազատել և թաթար, և հայ ազգաբնակությունը, մյուս կողմից, քանի որ Խալիլ²⁰ և Նուրի²¹ փաշաները Ադրբեջանից հեռացնելու բրիտանական կառավարության պահանջը Բաքվի կառավարությունը մերժել է, չափազանց վիրավորական կլինի, և մեր ծայրահեղ խեղճության ապացույց, հեշտությամբ և միանգամ անհրավ տեղը զոհել մեր պարկեշտ և կարևոր գործիչներին և կարծել տալ, թե մենք ընդունում ենք մեզ վերագրված ամոթալի, անպատիվ մեղադրանքը: Եվ ահա թե ինչու ես դեմ եմ Դրոյի, Յամազասպի և Գյուլխանդանյանի հեռանալուն:

Սակայն մյուս կողմից անհնարին է բացարձակ անուշադրության մատնել այսպիսի հայտարարությունը մի մեծ պետության** կողմից, որից մենք այնքան ակնկալիքներ ունինք, ուստի, ըստ իս, լավագույնն է գեթ առժամապես մեր երեք գործիչներին պաշտոնները փոխել՝ ըստ ձեր հայեցողության:

3) Ապրիլ 9-ին ձեզ հեռագրելուց հետո, «Թայմզը»^{3*} հրատարակելով Գողթանի կոտորածի²² նկարագիրը, որը ես էի տվել, ավելացնում է, թե Պոլսի հայ թերթերը հաղորդում են, որ հայ զորքերը, հակառակ Նուրի փաշայի կատաղի դիմադրության, գրավեցին Շուշին, Ասկերանը և Խանքենդը^{4*}: Եթե այս փաստը ճիշտ է, անշուշտ լորդ Ջ.Քերզոնը մեր գրույցի ժամին գիտեր այդ, հետևապես նրա պահանջը հեռացնել մեր գլխավոր մարտիկներին դառնում է բոլորովին համանման Անդրանիկի հեռացնելուն Ձանգեզուրից:

4) Անհամբեր ստասում ենք Ղարաբաղը մերոնց կողմից գրավված

** Մեծ Բրիտանիա:

^{3*} Լոնդոնում հրատարակվող թերթը:

^{4*} Ստեփանակերտ:

լուրի հաստատող Ձեր հեռագրին: Եթե իրոք մեր գործերը տիրում են Ղարաբաղին, ապա ներկա պայմաններում չեն զարմանա, եթե բրիտանական ներկայացուցիչները պահանջեն մեզնից նորից թողնել հեռանալ այնտեղից: Չգիտեմ, ինչ կպատասխանեք դուք, բայց, ըստ իս, զիջումը մեր կողմից Ղարաբաղի հայությունը կմատներ թաթարական կատաղության: Հետևապես Ղարաբաղը թողնելու չէ և այդ մտքով պահանջին միակ արդար պատասխանը կլիներ հայտնել, թե մենք Ղարաբաղը միայն դաշնակից գործերին կտանք և ոչ դաշնակից անհատ գործակալներին (ազենտ): Վստահ եղեք, որ երբեք դաշնակից գործեր²³ Կովկաս գալու չեն:

5) Շտապեմ ավելացնել նաև, որ [Ձ.]Քերզոնի հետ տեսակցության հաջորդ օրը արտաքին գործոց նախարարություն գնացի՝ նույն նյութի մասին խոսելու, և //-60 ինձ հայտնեցին, թե հակառակ լորդի հայտարարության, Հայաստան զենք ղրկելու պատրաստությունները շարունակվում են անընդհատ և չպիտի դադարեն:

6) Ամենից մխիթարականը լորդ Ջ.Քերզոնի հայտարարության մեջ վերաբերվում է մեր կովկասյան սահմաններին: Լորդի ասելով, թուրքական դաշնագիրը ստորագրելուց հետո, մի քանի հանձնաժողովներ պիտի գնան Կովկաս՝ տեղում կարգադրելու համար մեր սահմանավեճերը, այս առթիվ արբիտրաժն իսկ նա գտավ անընդունելի: Եվ, որովհետև թուրքական դաշնագրի ստորագրությունը հազիվ շաբաթների խնդիր է, եթե նոր անակնկալներ տի չունենան, հետևապես մեր սահմանների կարգադրությունը Կովկասում շատ հեռու չէ: Լորդ Ջ.Քերզոնի այս հայտարարությունը մեզ համար նորություն է և մխիթարական:

Սակայն եթե մինչև այդ ստիպված լինինք նորից խոսել վրացիների հետ, ինչ որ հնարավոր է, խնդրում են նկատողության առնելք որ առաջին. որ Ն.Չխեիձե²⁴ և Ջ.Ավալով²⁵ փաշայի*, Օհաննես Խանի²⁶ և ինձ հետ ունեցած մի քանի ժողովներից հետո մերժեցին մեր առաջարկը՝ սահմանավեճերը Կովկասից այստեղ փոխադրել: Նույն և Ա.Թոփչիբաշև²⁷: 2) Ձեր փետրվար 6-ի նամակից տեսնում եմ, որ դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, բայց չհասկացա վրացիների ո՞ր զիջողության փոխարեն: Գիտե՞ք արդյոք, որ վրացիք պահանջում են Արդահան և Օլթի և առհասարակ ճորոխի շրջանը, որը կարող է մեզ ծով դուրս գալու տեսակետից շատ դժվար կացության մեջ դնել, ահա, թե ինչու, եթե դուք տրամադիր եք զիջել Ախալքալաքը, ապա այդ պետք է անել այն պայմանով, որ վրացիք ընդունեն մեր հայեցակետը ոչ միայն Լոռու շրջանի վերաբերյալ, այլև Արդահանի, Օլթիի և առհասարակ ճորոխի շրջանի վրա: Ինչ վերաբերվում է Լոռիին, մենք գտնում ենք, որ չի կարելի նրանց զիջել հանքային շրջանը և, առհասարակ, նրանց պետք չէ շատ ներս թողնել մեր լեռնավայրը²⁸:

Այստեղ սահմանների ճշտումի ֆորմուլան** միայն պիտի կիրառվի, չնոռանաք խնդրում եմ, որ վրացական պահանջները հիմնովին անհրավ

* Պողոս Նուբար:

** Բանաձև:

են: Եթե վրացիք Ձեր պահանջները չընդունին, լավագույն է ձգձգել բանակցությունները, բարի հարաբերություններ պահպանել մինչև Գերագույն խորհուրդը²⁹ ղրկի հանձնաժողովներ³⁰:

Հայտնում են, որ Ջ.Քերզոնի հետ զրույցից հետո մեր նախընթաց ենթադրություններն և առնելիք քայլերի որոշումները սահմանների վերաբերմամբ այլևս հետամտելու չենք և Սան Ռեմոյում պիտի պնդենք Կովկաս հանձնաժողովներ ղրկելու վրա, որ կարծում ենք (փաշան^{3*} և ես), լավագույն ելքն է այս կնճռոտ հարցի համար:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, ք.110-114: Բնագիր: Մեքենագիր:

№ 3

ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ
ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝
ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ³¹ ՄԱՍԻՆ

27 ապրիլի 1920թ., Սան Ռեմո

«Բրիտանական արտաքին գործոց նախարար լորդ Ջ.Քերզոնի մի շատ կարևոր նամակի պատճենը հաճույքով են ներկայացնում Ձեր ուշադրությանը: Կարծում են, որ սրանով վերջապես լուծվում է մեզ զենք և ռազմամթերք հայթայթելու թելու խնդիրը, որ ես հետապնդում եմ ահա մի տարուց ավել: Ըստ իս, այս փաստաթղթի արժեքը նաև քաղաքական տեսակետից խոշոր է: Լորդ Ջ.Քերզոնի հետ մեր վերջին խիստ անհաճո տեսակցությունից հետո (ապրիլ 8-ին Լոնդոնում), որի մասին վերջին սուրհանդակով այդքան ցավելով գրեցի Ձեզ, այս նամակը գալիս է ապացուցանելու անգլիական քաղաքականության մեջ հիմնական փոփոխությունը դեպի մեր կառավարությունն ու պետությունը: Առաջին անգամն է, որ մենք պաշտոնական գրության մեջ անվանվում ենք «կրտսեր դաշնակից», և այն էլ այսքան բարյացակամ ոճով: Այս փոփոխության պատճառների քննության մեջ չեն մտնում, բայց կասեն, որ դա նկատվում էր նաև ճորոխի հովտի և Բաթումի վերաբերյալ հարցերի մեջ այստեղ՝ Սան Ռեմոյում: Մեր կառավարության ինձ տված երկրորդ հավատարմագիրը ապրիլ 21-ը 1919 թվի հ.1098, բարեբախտաբար ինձ արտոնում է ստորագրել այս կարգի պայմանագրեր, ուստի ես անմիջապես պատասխանեցի բրիտանական արտաքին գործոց նախարարին, թե պատրաստ եմ կատարել պետք եղած հանձնարարությունները իմ կառավարության՝ ինձ տված հավատարմագրի հիման վրա: Մեծահույս եմ, որ այս անգամ ձեռնունայն մնալու չենք և մյուս կողմից, ես կարծում եմ, թե իր այս նամակով լորդ Ջ.Քերզոնը միաժամանակ աշխատում է ցրել մեր վերջին տեսակցության ծանր տպավորությունը և բարյացակամության լուրջ ապացույց տալ մեզ: Այս բոլորն ի նկատի առնելով, խնդրում եմ 1) լորդ Ջ.Քերզոնի և իմ անցյալ ապրիլի 8-ի տեսակցության անախորժ կողմերի վրա չանդրադառնալու, բավականալ միայն ինձ նյութեր ղրկելով, հերքելու

^{3*} Պողոս Նուբար:

համար նրան մեղադրանքների այն կետերը, որոնք արդյունք են թյուրիմացության: 2) Ոչ մի պայմանով չթույլ տալ մանավաճանդ որ այդ անհաճո ինցիդենտը լրագրության նյութ դառնա և արգելեք որևէ հարձակումը բրիտանական կառավարության, կամ իր ներկայացուցչությունը հասցեին: 3) Անմիջապես գրավոր և բերանացի շնորհակալություն հայտնել Ջ. Ուորդրոպին իր կառավարության այս բարյացակամության համար: 4) Պահել գաղտնիք լորդ Ջ.Քերզոնի այս նամակի բովանդակությունը, մանավաճանդ, եթե վրացիք և ադրբեջանցիք նույնը ստացած չեն:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ՝ Ա.Ա. հարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.115-116: Բնագիր: Մեքենագիր:

N° 4

ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՐ Ա.ԱՅԱՐՈՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ՝
ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27 ապրիլի 1920թ., Սան Ռեմո

«Այսօր փակվեց Սան Ռեմոյի խաղաղության համաժողովը: Շտապում են հատուկ սուրհանդակով Ձեզ ուղարկել այստեղ մեր հարցի վերաբերյալ որոշումները, մասնավորապես՝ երզրումի շուրջն եղած մեր դիվանագիտական անակընկալ դյուրությունների նկարագիրը³²: Միաժամանակ խնդրում են ոչ ավելորդ լավատեսություն ունենալ և ոչ անձնատուր լինել ծանր լրտեսության: Եշմարտությունն այն է, որ միացյալ, անկախ և ազատ Հայաստանը այսօր կատարված հարց է, սոսկ մեր սահմանների մասին տակավին վարանումներ կան: Որոնք մեծահույս են վերջ կունենան մինչև մայիսի 10-ը, երբ թուրքական պատվիրակությունը կհասնի Փարիզ և երբ ստացված կլինի նաև Վ.Վիլսոնի³³ պատասխանը³⁴, որի մասին կկարդաք ներփակ և որին ամենքի հետ մենք ևս առավել սպասում ենք ծայրահեղ անհամբերությամբ, բայց ավելի ևս մեծ հույսով:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ՝ Ա.Ա. հարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.117: Բնագիր: Մեքենագիր: //-62

N° 5

ՀԱՅ-ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՉԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՏԻՍՅԱՆԻՆ

27 ապրիլի 1920թ., Սան Ռեմո

«Հայ-վրաց-թաթարական համաձայնության փորձեր:

Լոնդոնում անդրկովկասյան երեք պետությունների պատվիրակությունների մեջ սկսված բանակցությունները³⁵ ապրիլի 13-ին վերանորոգվեցին Փարիզում, և ապրիլ 21-ին Սան Ռեմոյում, միշտ բրիտանական արտաքին գործոց նախարար լորդ Ջ.Քերզոնի առաջին քարտուղար Ռ.Վանսիտարտի ներշնչումով ու անմիջական ղեկավարության տակ: Ես գրել եմ ձեզ արդեն Լոնդոնի բանակցությունների մասին և վերջին սուրհանդա-

կով, կաշխատեն այժմ հակիրճ գաղափար տալ հետագա բանակցությունների մասին նախ Փարիզում, ապա Սան Ռեմոյում: Յուրաքանչյուր պատվիրակությունից հիշյալ ժողովում ներկա էին լինում 3-4 անդամներ: Ինձ հետ ունեի միշտ գեռ. Գ.Ղորղանյան³⁶, Պողոս փաշա³⁷: Գ. Նորատունկյան³⁸ Սան Ռեմոյում, նաև Մ.Վարանդյան³⁹, որին հրավիրեցի Յոնից: Վրացիների կողմից Ն.Չխեիձե, Զ.Ավալով, Ի.Գորբեչիա⁴⁰, Կ.Գվարջալաձե⁴¹, թաթարների կողմից Ա.Թոփչիբաշև, Լեյխուլ Իսլամով⁴² և էլի երկու խորհրդականներ: Դեռ Լոնդոնում բրիտանական արտաքին գործերի նախարարության, ինչպես և խաղաղության համաժողովի շրջաններից, մեզ խորհուրդ էր տրվում փորձել համաձայնության գալ մեր երկու հարևանների հետ մեր հյուսիսային ու արևելյան սահմանների մասին: Քանի որ համաժողովը առայժմ որոշելու է մեր սահմանները մի-միայն Թուրքիայի հետ, մենք ընդառաջ գնացինք այդ ցանկության: Նյութը կրկնակի էր.

ա) երեք պետությունների սահմանավեճերի կարգադրություն:

բ) Հայաստանի և Ադրբեջանին Բաթումից տնտեսական ելք տալու խնդիրը այն դիպվածում, թե Բաթումն ու իր շրջանը Վրաստանին միանան Գերագույն խորհրդի որոշումով: Փարիզում ապրիլի 13-ին վերսկսված հենց առաջին ժողովում պարզվեց, որ երեք պետությունները զանազան ժամանակ կնքված համաձայնություն ունին սահմանավեճերը լուծել բանակցությունների խաղաղ ճամբով և, ձախողելու դեպքում, դիմել միջնորդ դատարանի, պարզվեց նաև, որ այս համաձայնության ժամանակից ի վեր կատարված փորձերը ցանկալի արդյունք չեն տվել և մյուս կողմից՝ համաձայնությանց մեջ նախատեսված չեն ոչ բանակցությունների ժամանակը, և ոչ միջնորդ դատարանի, ուստի որոշվեց հիմք ընդունել երեք կառավարությունների մեջ կայացած համաձայնությունը՝ այստեղ միջոցներ խորհել փութացնելու սահմանավեճերի լուծումը և այստեղի որոշումները հաղորդել և՛ Գերագույն խորհրդին, և՛ երեք կառավարություններին միաժամանակ, որպես արտահայտություն խաղաղության համաժողովի և երեք պատվիրակությունների ներդաշնակ հայեցակետերի: Խորհրդակցությունների սկզբում, սակայն, պարզվեց, որ մինչդեռ մենք աշխատում ենք այնպիսի պայմաններ դնել, որոնք կարող են փութացնել տրված խնդիրների իրական լուծումը, վրացիք և թաթարները ընդհակառակը՝ հետամտում էին ձգձգումի մեթոդը: Եվ վիճաբանությունները իրոք երեք օր շարունակ ճշտումների տարբերության շուրջն էին դառնում, մինչդեռ մենք հավատ չունենալով, թե բանակցություններով կովկասում կարելի է եզրակացության գալ, աշխատում էինք շուտով դիմել միջնորդ դատարանին: Մեր երկու հարևանների պատվիրակները, դրան հակառակ, աշխատում էին որքան կարելի է երկարացնել բանակցությունների շրջանը և նույնիսկ միջնորդ դատարանի կազմությանը դնել այնպիսի պայմանների մեջ, որ նա ամիսներ ու տարիներ տևի: Երեքօրյա վեճերից հետո կարելի եղավ մի համաձայնության հանգել սահմանավեճերի մասին, որի գլխավոր կետերն են

1) Վեց շաբաթվա ընթացքում փորձել բանակցությունների միջոցով համաձայնության գալ: 2) Հակառակ դեպքում դիմել արբիտրաժի՝ երեք

անդամից բաղկացած, որի մի-մի անդամը նշանակում են երկու կողմերը, իսկ նախագահը նշա-/-63 նակում են փոխադարձ համաձայնությամբ, եթե չկարողացան այդ ընտրությունը անել, դիմում են կամ դաշնակից պետությունների Գերագույն խորհրդին, կամ Ազգերի լիգային⁴³, կամ որևէ չեզոք պետության անվանելու միջնորդ դատարանի նախագահին: Այս համաձայնության մանրամասները կցված են այս զեկույցին: Այս համաձայնության մանրամասները տեսնել Annex A.* պատճենը կցված այս զեկույցին:

Սույն համաձայնագիրը կայացավ ապրիլ 16-ին՝ Փարիզում: Այնուհետև ժողովը անցավ Բաթունի խնդրին: Ռ.Վանսիտարտը⁴⁴ հայտարարեց, թե Բաթունի պրոբլեմի համար Գերագույն խորհուրդն իր որոշումն ունի, սակայն գերադասելի է, որ դուք համաձայնության գաք իրար մեջ: Սա մեծապես կհեշտացնի գործը և վստահություն կներշնչի դեպի ձեր պետական կարողությունը: Վրացիք հայտարարեցին, թե իրենք պահանջելու են, որ Բաթունն ու իր շրջանը կցվի Վրաստանին, թե հայերն ու թաթարները վրացոց այս պահանջը պաշտպանեն, նրանք պատրաստ են իրենց կողմից ապահովել երկու հարևաններին տնտեսական ելք դեպի Սև ծովը՝ Բաթունով, տալով դրա համար բոլոր անհրաժեշտ երաշխիքները: Այս ֆորմուլաները, իրենց անորոշությամբ, մեզ թվաց անբավարար. մենք պահանջեցինք պարզել երաշխիքների բնույթը: Նրանք առաջարկեցին մեզ ներկայացնել մեր պահանջները գրավոր: Մենք պահանջեցինք 1) Բաթունը դարձնել անջատ և ֆրանկ նավահանգիստ** (port libre et franc): 2) Մեզ Բաթունում հատկացնել առանձին նավահանգիստ կամ ավելի ճիշտ քարափ^{3*} (quai): 3) Գորոխի ձախ ափը միացնել Ղալաբաղին, որպեսզի այդտեղից մեր երկաթուղագիծը անցնի: 4) Գորոխի գետաբերանից մինչև Բաթուն վրացական հողի միջից էքստերիտորյալ (servitude) իրավունքով^{4*} թույլ տալ անցկացնել մեր գիծը:

Վրացիք մերժեցին մեր պահանջները, մենք էլ մերժեցինք ճանաչել նրանց souverainetե-ն իրավունքը^{5*} Բաթունի ու շրջանի վրա: Ռ.Վանսիտարտը ցավ հայտնեց, որ համաձայնություն չի կայացել և ավելացրեց, որ Ղալաբաղն իր երկաթուղային գիծը պիտի ունենա և՛ դեպի Բաթուն և դեպի Աթինա և Ռիզե, և թե սա Գերագույն խորհուրդի անդառնալի վճիռն է, հետևապես իրավիրեց բանակցությունները վերսկսել Սան Ռեմոյում:

Այստեղ, Սան Ռեմոյում ապրիլի 21-ին սկսված բանակցությունների շրջանում ի վերուստ ներշնչումով մենք մեզ բռնադատված տեսանք իրաժարվել Գորոխի ձախ ափին հողային պահանջից և բավականանալ միմիայն տնտեսական ելքով, պայմանով, որ հողային սուվերենիտետը^{6*} Վրաստանին մնա, բայց երկաթուղային գիծը իր բոլոր շինություններով դառնա Ղալաբաղի անձեռնամխելի սեփականություն և երկրորդ՝ մենք

* Առդիր Ա: Գործում բացակայում է:

** Մաքսից ազատ նավահանգիստ:

^{3*} Նավամատույց:

^{4*} Արտերկրայնության իրավունք:

^{5*} Ինքնիշխանություն:

^{6*} Գերիշխանություն:

իրավունք ունենանք ճորոխի գետաբերանից մի փոքրիկ ճյուղ տեճալ դեպի նախկին ռուս-թուրքական սահմանը, հայկական Լազիստանին⁴⁵ միանալու համար: Այս առաջարկը հայտարարեցինք մեր մինիմումը, հակառակ դեպքում, ասացինք, վերստին կպահանջենք ճորոխի հովիտը՝ որպես հողային սեփականություն և այս մտքով կդիմենք Գերագույն խորհրդին: Վրացիք մերժեցին և այս, և իրենց կողմից առաջարկեցին մեր ծախքով շինվելիք երկաթուղային գծի վրա վրաց-հայ-թաթարական condominium-ի^{7*} պես մի բան, ինչ որ մենք վճռապես մերժեցինք: Նույն օրը Ռ.Վանսիտարտը բոլորին ժողովի հրավիրեց և հայտարարեց հետևյալը. լորդ Ջ.Քերզոնի, և կարող եմ ասել՝ համաժողովի կողմից, ես ձեզ հայտարարում եմ, որ հայերը իրենց զիջողությունը հասցրել են ծայրահեղ մինիմումի. ավելի հեռուն գնալ չեն կարող՝ երկաթուղային գիծը պիտի նրանց պատկանի en tout propriete - լիակատար սեփականությամբ, և //64 երկրորդ. նրանք պիտի իրավունք ունենան նոր գիծ տանել ճորոխի գետաբերանից դեպի Աթնա և Ռիզե՝ իրենց սեփական նավահանգիստները: Եթե դուք՝ վրացիք, չընդունեք այս, այն ժամանակ Գերագույն խորհուրդը կվճռի առանց ձեզ, ու վստահ եղեք, որ դուք կստանաք Բաթումի շրջանի հազիվ մեկ երրորդը, իսկ հայերը կունենան իրենց երկաթուղային գիծը դարձյալ Բաթումի շրջանից, բայց սեփական հողով: Ես ձեզ ասում եմ, որ դուք վրացիներդ չեք ըմբռնում այս քաղաքական մոմենտի լրջությունը և շատ կտուժեք այս խնդրում: Այս հայտարարությունը անելեն վերջը, նա դուրս գնաց: Վրացիք առաջարկեցին վերջին անգամ հավաքվել հաջորդ օրը: Մինչև այդ պարզվեց, սակայն, որ վրացիք ու թաթարները միաբան զեկույց են ներկայացրել Գերագույն խորհրդին, աղավաղելով փաստերը և մեղադրելով մեզ.⁴⁶ (տեսնել Annexe B)*, այս գաղտնի զեկույցը մենք ձեռք բերինք, իմացանք նաև, որ իրազեկ շրջաններում, Ռ.Վանսիտարտից տեղեկանալով ճշմարտությունը, շատ դժգոհ են վրացիների ընթացքից: Հավաքվել ենք վերջին անգամ ապրիլի 25-ին⁴⁷: Այս անգամ վրացիք եկան մի բոլորովին նոր առաջարկությամբ, որ ձևակերպեց Ն.Չխեիձեն և հետո Ի.Գոբեչիա ընդարձակ կերպով ճառելով, որ ես պետք եմ համարում մեջ բերել որպես չափազանց խրատական: Նրանք հայտնեցին հետևյալը.

1) Պարոններ վրացիք մի դեմոկրատ ժողովուրդն էին, և ունեն իրենց պառլամենտը, կառավարությունը և հասարակական կարծիքը. իրենք չեն կարող առանց այդ կառավարության ու պառլամենտի որևէ քայլ առնել այստեղ, վրացական թեկուզ մի քիչ հողը զիջել: Բաթումի շրջանին մեր պառլամենտը, ասաց Ի.Գոբեչիա, տալու էր լայն ինքնավարություն և արդեն այնտեղ մեջլիս կա՝ ինչպե՞ս կարող ենք զիջել ժողովուրդի հողը առանց իրեն հարցնելու: Եվ վերջապես դուք պահանջում եք Լազիստանը, հարցրե՞լ եք լազերի կարծիքը, ի՞նչ իրավունքով դուք պիտի կցեք Հայաստանին այդ հողամասը առանց տեղական ժողովուրդի ցանկությունը հարցնելու: Նրանք խնդիրներ են, ավելացրեց Ն.Չխեիձեն, որ կա-

^{7*} Համատիրություն:

* Առդիր Բ: Բացակայում է արխիվային գործում:

րող են լուծել միայն տեղում, հետևապես մենք առաջարկում ենք այստեղից մի-մի մարդ դրկել Երևան ու Թիֆլիս, որոնք կբացատրեն իրերի դրությունը և կիրավիրեն երկու կառավարությունները խոսիլ իրար մեջ անմիջական բանակցություններով: Սա մի մասնավոր խնդիրը թողելու ամբողջ մի ամիս բանակցելուց հետո, վրացիք խույս էին տալիս, ես պատասխանեցի:

- Պարոններ, ես հաճույքով լսեցի ձեր հայտարարությունն այն մասին, թե չի կարելի մի հողամաս պահանջել առանց տեղական ժողովրդի կամքն առնելու: Բայց ներեցեք ձեզ հարցնել, առե՞լ եք դուք Լոռիի, Բորչալուի, Ախալքալաքի հայ ազգաբնակչության կամքը: Երբ պահանջում եք այդ շրջանները: ո՛չ, դուք չէք առել, բայց գծագրել էք քարտեզի վրա և դրել Գերագույն խորհրդի առաջ, պահանջելով այդ հողամասերը և եթե վաղը Գերագույն խորհուրդը ձեր ցանկությունը կատարի և ձեզ հանձնի հիշածս վայրերի հայ ժողովրդի բաղդը, դուք հաճույքով մոռացության կտաք բոլոր ձեր դեմոկրատիկ սկզբունքները և կընդունեք: այդ ինչպե՞ս է, որ երբ խնդիրը գալիս է ձեր զիջումներին, իսկույն մեջ տեղ եք նետում և դեմոկրատիան, և ժողովուրդի կամքը, և ինքնորոշումն: Ո՛չ պարոններ, լինենք հետևողական և արդար: կամ բոլոր դեպքերում մնանք դեմոկրատիկ սկզբունքների վրա, կամ թույլ տանք մեր հարևաններն էլ նույնն անեն: Դուք մեզանից հող եք պահանջում բնակեցրած հայ ժողովրդով պարզապես որպես տերիտորիա, դուք գիտեք սակայն, որ մեր պահանջը, ցանկությունը ճորոխի հովտում հողային հարստություն ձեռք բերելը չէ, մեր պետության ընդարձակելը չէ, այլ պարզապես ելք ունենալու համար դեպի ծով, առանց որի մեր պետությունն անհնարին է: Ոչ, մեր և ձեր հողային պահանջների մեջ ոչ մի նմանություն չկա: դուք համաձայն չե՞ք, դուք կուզեք որ մենք շարունակենք խեղդվել մեր լեռներում առանց ելքի, դա ձեր կամքն է, բայց մենք էլ խեղդվել չենք ուզում: Մնում է, որ Գերագույն խորհուրդը լուծի Բաթումի և շրջանի խնդիրը:

Այնուհետև առաջարկեցինք գեթ ստորագրել Փարիզ կայացած համաձայն-//65 նության գիրը սահմանների մասին: նրանք պատասխանեցին, թե առանց Բաթումի պրոբլեմը լուծելու չեն կարող ստորագրել այդ համաձայնագիրը: Եվ բաժանվեցինք մի ամսվա անպտուղ բանակցություններից հետո: Նույն օրը ևեթ մենք զեկույց տվինք Գերագույն խորհրդին (տես. Annexe C)*, որը կցված է այս նամակին և որի վրա հրավիրվում է մեր կառավարության լուրջ ուշադրությունը:

Ինչպես կտեսնեք մեր Annexe C հուշագրից, մենք պահանջել ենք և պահանջելու ենք այսուհետև, որ ճորոխի հովտում մեզ տերիտորիալ ելք արվի դեպի Սև ծով՝ Բաթում: Մենք այս պահանջը ներկայացրեցինք Գերագույն խորհրդին նախ որովհետև վերջնականապես համոզվեցինք, որ վրացիք իրենց հատուկ իրավական ըմբռնումներով պիտի ամեն կերպով աշխատեն խափանել մեր դեպի ծով ելքը հազար ու մի պաշտոնական և մասնավոր անիրավություններով, և երկրորդ, այն պատճառով, որ մենք համոզվումն գոյացրինք, որ Գերագույն խորհուրդը այսպիսի լու-

* Առդիր Գ: Գործում բացակայում է:

ծուճը - այսինքն ճորոխի հովտով մեզ հողային ելք հատկացնելը որպես մեր սեփականություն դեպի Սև ծովը - համարում է և ընդունելի, և արդար: Չեմ կարող բացարձակապես պնդել, թե այդպիսի որոշումն կայացած է, բայց կարող եմ ասել, որ Գերագույն խորհրդին շատ մոտ կանգնած պաշտոնական մի անձն եկավ մեզ հաղորդելու երեկ, թե Հայաստանին կցվելու է ոչ միայն Լազիստանը Աթինե - Ռիզեով, այլև ճորոխի հովիտը, որպեսզի հայ պետությունն իր իսկական ելքն ունենա դեպի ծովը իր սեփական հողի միջով: Եթե ճշմարիտ է այս հայտնությունը, գիտեմ, վրացիք ուժգնորեն պիտի բողոքեն. սակայն ես կարծում եմ, հնարավոր է, այնուամենայնիվ, նրանց հետ մի կոմպրոմիսի* հանգել, օրինակ նրանց ձգելով Ախալքալաքն ու Լոռու-Բորչալու շրջանից մեր մասը, բայց միշտ առանց հանքերի: Մեր սխալն այս խնդրում միշտ այն է եղել, որ մենք նրանց հողային պահանջների հանդեպ հողային պահանջ չենք հանել և բավականացել ենք միայն պաշտպանվելով: Ըստ իս, հրաշալի առիթ է փոխել այս մեթոդը իրական արդյունքով: Այսպես թե այնպես, թուրքական դաշնագրի հետ կսահմանվի և մեր հողային իրավունքները ճորոքի հովտում: Գեթ այսպես հայտարարեց նույն Ռ.Վանսիտարտը երեք պատվիրակությունների ժողովի մեջ, ինչ որ շատ ծանր եկավ մեր հարևաններին:

Ես կարողացա ձեռք բերել թուրքական ընդհանուր դաշնագրից⁴⁸ մեր սահմաններին վերաբերող մասը, որի պատճենը դրկում եմ ներփակ (Annexe D)^{3*}: Թեև այստեղ ընդհանուր սկզբունքներին գրված (սա կազմված է Սան Ռեմոյի համաժողովից առաջ), բայց և այնպես կարելի է գաղափար կազմել մեր մոտավոր ապագայի մասին. նկատեցեք, որ հինգերորդ կետը հակիրճ կերպով ասում է “La mer Noire,” այսինքն մեր սահմանն է լինելու Սև ծովը: Հետևապես Լազիստանը:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա.Ահարոնյան»:

ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.290, թ.117-132 և 133 շրջ.-137: Բնագիր: Մեքենագիր, ձեռագիր լրացումներով:

Ծանոթագրություններ

1. Նավահանգիստ հարավային Իտալիայում, հոնիական ծովափում:
2. Տիգրան Չալյան - Լոնդոնի կոնֆերանսում հայկական պատվիրակության անդամ, 1920թ. փետրվարի 25-ին, Պոդոս Նուբարի և Կ.Պոլսի հայոց պատրիարք Չավենի հետ միասին մասնակցել է Ջ.Բրայսի հետ հանդիպմանը:
3. Ռուսական կայսրության ամբողջականությունը վերականգնելու Ա. Կոլչակի և Ա.Դենիկինի ձգտում: //-66
4. Լեհաստանը խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ էր վարում, հիմք ընդունելով իր անկախությունը պահպանելու սկզբունք:
5. Արևելյան խնդիր, որպես Օսմանյան կայսրության ապագան որո-

** Փոխգիշում:

^{3*} Առդիր Դ: Գործում բացակայում է:

շելու և Պարսկաստանի հետ քաղաքական ու տնտեսական հարաբերությունները հստակեցնելու գործընթաց:

6. Ռուսական կայսրության սահմաններում ձևավորված Անդրկովկասի և բալթյան նորանկախ պետություններ:

7. Ա.Ահարոնյանը կարող էր նկատի ունենալ Սահմանադրական ժողովի, դաշնակցային պետության և ազատախոհ-բուրժուական զարգացման կողմնակիցներին:

8. Տվյալ դեպքում Ա.Ահարոնյանը կրկնում է Պողոս Նուբարի այն մտտեցումը, որ արևմտյան տերությունները ստեղծելու են ընդարձակ պետություն, որին միանալու է ավելի փոքր Հայաստանի Հանրապետությունը:

9. Փաստաթղթի մեկնաբանությունը տես. Hovannisian R., *The Republic of Armenia, vol.III: From London to Sèvres, February-August, 1920*. Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, p.129-130:

10. Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար:

11. Որպես Հայաստանի սպասվելիք հաջողությունների հակակշիռ ու զսպող միջոց, հիմք ընդունելով Ջ.Ուորդրոպի զեկուցագիրը, ապրիլի 8-ին Ջ.Քերզոնը սպառնաց, որ Մեծ Բրիտանիան չի կատարի Խաղաղության վեհաժողովի որոշումն ու ՀՀ-ին զենք չի տրամադրի, եթե այն ուղղելու են Ադրբեջանի դեմ: Այդ ամենը ասվում էր 1920թ. մարտի 23-ին իրականացրած Շուշիի կոտորածից անմիջապես հետո, Ղարաբաղի և Ջանգեզուրի վրա լայնատարած հարձակման պայմաններում: Խոսակցության պահին՝ ապրիլի 9-ի դրությամբ, Ադրբեջանի կանոնավոր բանակը հրկիզում էր հայկական Մարաղա, Մարգուշավան, Նորագյուղ, Խրամորթ, Քյաթուկ, Խնածախ, Շոշ, Դաշուշեն, Կրկժան, Պահլուլ, Ջամիլի, Ղայբալիշեն գյուղերը: Վերջին չորսի վրա սա երկրորդ մեծ հարձակում էր՝ 1919թ. հունիսի 4-7-ի ավերից հետո: Մարաղան հայտնի էր նաև 1992թ. ապրիլի 10-ի ու 22-23-ի նրա վրա կատարված գրոհներով: Եվ առաջին օրվա 57 տանջամահ արած գյուղացիներից սպանվել էին Ղերսայա Հովսեփյանն և Օլգա Պապիկյանը, որոնք 1920 թվականին 15 տարեկան էին, ու Անուշ Իլյասյանը՝ այն ժամանակ 17 տարեկան:

Ավելի մանրամասն տես. <http://www.maraga.nk.am>; <http://www.Karabagh.am/GlavTem/17maraga.htm>; <http://sumgait.info/maraga/maraga-1992.htm>; Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սեվր և Լոզան, Եր., ԵՊՀ, 2001, էջ 77-83; Hovannisian R., *Op.cit.*, p.157-158; Махмурия Г.Г., *Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Время белого человека*. Ер., Лусакн, 2002, с.200; она же, *Дипломатия Республики Армения в январе-апреле 1920 г.*, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2007, հ.2, էջ 94-95; она же, *Великобритания и Республика Армения 1918-1920 гг. Опыт имперской Восточной политики в Закавказье и на Парижской мирной конференции*, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, Եր., Ասողիկ, 2009, գիրք 1 (38), էջ 155-156:

12. Բրիտանիայի գլխավոր կոմիսարը Անդրկովկասում: 1920թ. մարտի 4-ին Ֆորին օֆիս է բողոքել, որ ՀՀ դաշնակցական դահլիճը չի կարող

ղեկավարել մահմեդական բնակչությունը:

13. Այն պահին Դ.Կանայանը Ջանգեզուրում ԶԶ ստորաբաժանումների հրամանատար էր, ապրիլի 13-ից՝ Ղարաբաղի ԶԶ ռազմական վարչության ղեկավար:

14. Այն պահին Զ.Սրվանձտյանը եղել է Նոր Բայազետի շրջանի զորամասերի հրամանատար:

15. Ֆորին օֆիսում, Ջ.Ուորդրոպի մարտի 4-ի զեկուցագիրը մշակել է Է. Մաք-Դոնելլը, որը մինչև այդ՝ որպես փոխ-հյուպատոս տաս տարի պաշտոնավարել էր Բաքվում: Վերջինը ինքնուրույն ավելացրել է Դ.Կանայանի, Ա. Գյուլխանդանյանի և Զ.Սրվանձտյանի անունները ու փաստաթուղթը փոխանցել է Ջ.Քերզոնին: Ի դեպ, բրիտանացին սկսել էր դժգոհել // -67 Ջ.Ուորդրոպի գրածը ստանալուց էլ շուտ՝ փետրվարի 28-ից ի վեր: Տես. Hovannisian R., Op. cit., p.125-126:

16. Ա.Ահարոնյանը շատ հակիրճ նկարագրում է անցյալը, իմանալով, որ հասցեատերը լավատեղյակ է իրադարձություններից: 1918թ. դեկտեմբերին -1919թ. մարտի 22-ին Ա.Օզանյանն ու նրա զորամասը մնում էին Ջանգեզուրում, երաշխավորելով, որ ադրբեջանցի քոչվորները չեն զավթի երկրամասը: Այդ ուժի հեռանալուց հետո, Ջանգեզուրը երբեք էլ չի ենթարկվել Ադրբեջանին: Միայն Ղարաբաղի վիճակը, ուր Ա.Օզանյանի զորամասը շարժվում էր օգնության, բայց 1918թ. դեկտեմբերին կանգնեցվել էր բրիտանական հրամանատարության պնդմամբ, շատ ավելի ծանր է եղել: Այստեղ՝ 1919թ. օգոստոսին, բրիտանացիներին հաջողվել էր հայտարարել Ադրբեջանին ենթակա ժամանակավոր գեներալ-նահանգապետություն:

17. Խոսրով-բեկ Սուլթանովը 1918թ. ամռանը եղել է թուրք գեներալ Նուրի փաշայի օգնական ու ջարդարար: 1919թ. հունվարի 15-ին հայտարարվել է Ղարաբաղ-Ջանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, նույն թվականի օգոստոսի 22-ին՝ հաստատվել է այդ պաշտոնում Ղարաբաղում, բայց Ջանգեզուրում երբեք հաջողության չի հասել:

18. Ֆաթալի Խան-Խոյսկի - Ադրբեջանի արտաքին գործերի նախարար:

19. Բեհրուտ Խան Ջիվանչիր - Ադրբեջանի ներքին գործերի նախարար: 1918թ. մայիս - սեպտեմբերին սերտորեն համագործակցել է թուրքական բանակի հետ, հանդիսանալով Նուխիի, Արեշի, Շամախայի, Գյոլչայի հայերի ջարդերի կազմակերպիչ:

20. Խալիլ փաշա Քուբ - օսմանյան բանակի գեներալ, Էնվերի հորեղբայր, «Մեծ Թուրանի» ջատագով: 1918թ. եղել է թուրքական 6-րդ բանակի հրամանատար, նույն թվականի մայիսի 15-ին նրա զորքերը զավթել են Ալեքսանդրապոլ, իսկ սեպտեմբերին՝ Բաքու: 1920թ. մարտի 23-ին նա, Նուրի փաշան ու Ա.Շիխլինսկու զորամիավորումները այրեցին Շուշին և կոտորեցին հայ բնակչության մեծ մասին: Տես. ԶԱԱ, ֆ.200, ց.1, գ.427, թ. 238 շրջ.: Զայկական հարց, Զանրագիտարան, Եր., Զայկական հանրագիտարան, 1996, էջ 164:

21. Նուրի փաշա Ջելալ - օսմանյան բանակի գեներալ, Էնվերի եղբայր, երիտթուրքերի պարագլուխ: 1918թ. իսլամական բանակի հրամա-

նատար, սեպտեմբերին ներխուժեց Բաքու, այնուհետև՝ Շուշի, ուր վերադարձել է 1920թ. փետրվարի 8-ին, ինչպես նաև՝ մարտին: Տես. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 146, 236 շրջ., 237 շրջ.: «Times», Lnd., 19.03.1920:

22. Գողթանում կոտորածները սկսվել են 1919թ. դեկտեմբերի 25-ին, երբ ավերվել էին Վերին ու Ներքին Ագուլխար: 1920թ. հունվարի 3-ին, 6-ին ու 16-ին հարձակումը ուղղվել է երկրամասի հայկական գյուղերի դեմ: Մարտի 20-ից ի վեր, այն ընդունել էր լայնածավալ բնույթ, որը գլխավորում էին թուրքեր էդիֆ բեյն ու Խալիլը: Հունվարի 24-ին ՀՀ կառավարությունը բողոքել էր Ջ.Ուորդրոպին, փետրվարի 20-ին վերջինս հեռագիր է հղել Թիֆլիս՝ Գերագույն կոմիսար Վ.Հասկելին, և Փարիզ՝ Ա.Ահարոնյանին: Փետրվարի 25-ին Վ.Հասկելը ստացել էր երկրորդ հեռագիրը, իսկ ապրիլի 22-ին «Ղարաբաղ ու Ջանգեզուր» տեղեկանքը ուղղվել էր ԱՄՆ-ի հյուպատոս Չ.Մոզերին: Ավելի մանրամասն տես. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 249, թ. 18; գ. 427, թ. 68 շրջ., 236 շրջ., 238; ֆ. 276, ց. 1, գ. 183, թ. 29; Նախիջևան-Շարուրը 1918-1920թթ.: Փաստաթղթեր և նյութեր, խմբ. Վ.Ղազախեցյան: «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1993, N° 1-2, էջ 184-186, 196, 204:

23. Բրիտանական զորքի վերադարձը անհավանական էր, իտալական ստորաբաժանումներին ժամանել թույլ չեն տվել, ֆրանսիացիներն ու ամերիկացիները նախաձեռնություն չէին ցուցաբերում:

24. Նիկոլայ Չխեիձե - Վրաստանի պատվիրակության նախագահը Փարիզում:

25. Զուրաբ Ավալով - Փարիզի վեհաժողովում Վրաստանի պատվիրակության իրավաբանական հարցերով խորհրդական: //-68

26. Հովհաննես Խան Մասեհյան - Հայ ազգային պատվիրակության անդամ, այնուհետև՝ ՀՀ դեսպանորդ Անգլիայում:

27. Ալի Մարդան Թոֆչիբաշև - Փարիզի հաշտության կոնֆերանսում Ադրբեջանի պատվիրակության նախագահ:

28. 1920թ. ապրիլի դրությամբ, հստակեցված չէին Անդրկովկասի երկրների սահմանները: Հայ-վրացական հարաբերություններում վիճելի էին մնում Ախալքալաքի, Լոռու, Արդահան քաղաքի և նույն շրջանի հուսիսային մասի պատկանելության հարցերը: Վրաստանը պնդում էր Ախալքալաքը ընդգրկել իր սահմաններում, որի փոխարեն ճանաչում էր Լոռին՝ որպես Հայաստանի տարածք: Երբ Լոնդոնի կոնֆերանսը առաջարկել էր ՀՀ-ին հատկացնել ճորոխի հովիտը և Հայաստանի մաս ճանաչել ոչ միայն Արդահանն, այլև՝ Կարս-Արդահան-Արդվին ամբողջ երթուղին, այդ ժամանակ՝ փետրվարի 22-ին ու 25-ին Ն.Չխեիձեն և Ջ.Ավալովը մեծացրեցին իրենց նկրտումները Կարսի մարզում՝ հասցնելով ընդհուպ մինչև Օլթի: Գնահատելով իրավիճակը, Ս.Մամիկոնյանն և Ա.Խատիսյանը՝ որպես լուծում, առաջարկում էին միջազգային իրավարարություն կիրառել: Նույն մոտեցում ուներ նաև Լոնդոնի կոնֆերանսը, որտեղ, փետրվարի 25-ին, Հայաստանի սահմանների [որոշման] միջազգային հանձնաժողովը առաջարկեց ճշգրտել անդրկովկասյան երկրների սահմանները ու անմիջապես ժամանել վիճելի շրջաններ:

Նույն թվականի մարտի 18-ին Լոնդոն է ժամանել Երևանի եպիսկո-

պոս Խորեն Մուրադբեկյանը, ով Ա.Ահարոնյանին է բերել Ա.Խատիսյանի նամակը: Հաջորդ օրը, ՀՀ պատվիրակությունը իր նախագահի հետ միասին որոշել է հետամուտ լինել Եվրոպայի իրավարարական միջամտությանը: Մարտի 24-ին Ռ.Վանսիտարտը նորից հաստատեց կոնֆերանսի՝ երեք հանրապետությունների սահմաններով հետաքրքրված լինելու փաստը և ամսի 28-ին Ա. Ահարոնյանը մի շարք հանդիպումներ է ունեցել Վրաստանի պատվիրակների հետ: Նրա ընկալմամբ, երկու պատվիրակություններին էլ հարկավոր էր ստանալ իրենց կառավարությունների լիազորությունները, որպեսզի նրանք, Լոնդոնում կամ Փարիզում, անհապաղ կարգավորեին սահմանների խնդիրը: Մարտի 30-ին վրացական կողմը պատասխանել է, որ Անդրկովկասի երեք պատվիրակությունները պետք է դիմեն իրենց դատլիճներին, որպեսզի սահմանազատման բոլոր հարցերը փոխանցվեն միջազգային իրավարարության: Ի վերջո, ապրիլի 8-ին, Ջ.Քերզոնի հետ ունեցած զրույցի ընթացքում, ՀՀ պատվիրակությունը անդրադարձավ վերոնշյալ թեմային, պահանջել է իրականացնել պարտադիր միջամտություն այն դեպքերում, երբ երեք հանրապետությունները խելամիտ ժամկետում չհասնեն փոխհամաձայնության: Անգլիայի ԱԳՆ ղեկավարը պատասխանել է, որ Թուրքիայի հետ ապագա պայմանագրում նախատեսվում է հիմնել այդպիսի՝ Անդրկովկասի սահմանային վիճելի հարցերով զբաղվող հանձնաժողով, թեև Դաշնակիցները չեն զբաղվի իրավարարությամբ, մինչև չստորագրեն բուն պայմանագիրը:

Ելնելով Ա.Ահարոնյանի, Ա.Խատիսյանին հղած մարտի 23-ի և ապրիլի 12-ի նամակներից, ՀՀ վարչապետը փետրվարի 6-ին իսկ հաղորդել է, որ ՀՀ կառավարությունը համաձայն է զիջումներ անել Ախալքալաքի հարցում: Ինչպես տեսնում ենք, Ա.Ահարոնյանը դրան համաձայն չէր: Կարելի է լրացնել, որ, զուգահեռաբար, այդ նույն խնդիրները քննարկվում էին Թիֆլիսում, ապրիլի 9-14-ը ընթացած՝ անդրկովկասյան 2-րդ կոնֆերանսում:

Ավելի մանրամասն տես. Махмуриян Г.Г., Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг., с.188-189, 195-196; она же, Дипломатия Республики Армения в январе-апреле 1920 г., с.89-90, 93-94; Գ.Ի., Ավետիս Ահարոնյանի 1920թ. մարտի 19-ի և 23-ի նամակները Լոնդոնից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2009, հ.2, էջ 117-119:

29. Փարիզի վեհաժողովի վճիռներ կայացնող գերագույն մարմին, որը կազմվում էր մեծ տերությունների վարչապետներից և ԱՄՆ-ի նախագահից, կամ՝ իրենց կարգադրությամբ, արտաքին գործերի նախարարներից:

30. 1920թ. փետրվարի 12-ից ապրիլի 10-ին տեղի ունեցած Լոնդոնի կոնֆե-/-69 րանսում ստեղծվել են Հայաստանի սահմանների որոշման, և պայմանագրի ֆինանսական բաժնի պատրաստման հանձնաժողովներ (երկուսն էլ փետրվարի 17-ին), փոքրամասնությունների պաշտպանման ու նրանց իրավունքներին առնչվող պայմանագրի հողվածների պատրաստման, ինչպես նաև ռազմական հանցագործությունների դատապարտման կոմիտեներ (երկուսը փետրվարի 21-ին):

31. 1920թ. ապրիլի 18-26-ին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում տեղի է ունեցել դաշնակիցների Գերագույն խորհրդի նիստ, որը ավարտին էր հասցնել Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը:

32. Եթե 1920թ. մարտի 25-ին Լոնդոնի կոնֆերանսը որոշել է Էրզրումը ընդգրկել ՀՀ կազմում, ապա ապրիլի 22-23-ին Սան Ռեմոյի կոնֆերանսը նորից ու մանրամասն քննարկել է նույն հարցը: Որպես արդյունք, ապրիլի 25-ին վերջնական որոշման իրավունքը վերապահվել է ԱՄՆ-ի նախագահին և, ամսի 26-ին, Գերագույն խորհուրդը պաշտոնապես հայտարարել է, որ Վ.Վիլսոնին հրավիրել են կատարել անտողմնակալ իրավարարի դերը: Տես. Documents on British Foreign Policy, 1919-1939. Ed. by E.L.Woodward and R.Butler, 1st series, in 27 vols., Lnd., HMSO, 1947-1986, vol.VIII, p.218-219:

33. Վուդրո Վիլսոն - ԱՄՆ-ի նախագահ:

34. Ապրիլի 26-ին Սան Ռեմոյից (տես ծանոթագրություն N° 32) ուղղվաց հրավերին պետք է հետևեր ԱՄՆ-ի նախագահի պաշտոնական պատասխանը: Մայիսի 17-ին Վ.Վիլսոնը համաձայնեց վերջնականապես մշակել Էրզրումի հարցի հետ առնչվող վերաբերող Դաշնակիցների որոշման տեքստը:

35. Տես ծանոթագրություն N° 28: Բացի սահմաններից, մանրամասն քննարկում էին Բաթումը Անդրկովկասի առևտրի համար ազատ նավահանգիստ դարձնելու հնարավորությունը:

36. Գաբրիել Ղորղանյան - գեներալ-մայոր, ՀՀ պատվիրակության ռազմական խորհրդական:

37. Պողոս Նուբար - Հայ ազգային պատվիրակության նախագահ:

38. Գաբրիել Նորատունկյան - Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախկին նախարար, այդ պահին՝ Հայ ազգային պատվիրակության անդամ:

39. Միքայել Վարանդյան - 1920թ. փետրվարի 3-ից՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հռոմում:

40. Իոսիֆ Գոբեչիա - Վրաստանի պատվիրակության անդամ Փարիզի վեհաժողովում ու Սան Ռեմոյի կոնֆերանսում:

41. Կոնստանդին Գվարջալաձե - Վրաստանի պատվիրակության անդամ Փարիզի վեհաժողովում ու Սան Ռեմոյում:

42. Լեյխուլ Իսլամով - Արդբեջանի պատվիրակության անդամ Փարիզի հաշտության կոնֆերանսում:

43. Ազգերի լիգա - ՄԱԿ-ի նախորդած կազմակերպություն, որի նպատակն էր հաղաղության պահպանումը և անդամ-երկրների պաշտպանությունը արտաքին վտանգից: Ստեղծվել է 1919թ., Փարիզի վեհաժողովի որոշմամբ: Սկզբից՝ հունվարի 30-ին, ընդունվել է ազատվող ժողովուրդների հովանավորության մանդատային եղանակ: Մանդատի սահմանում և իրավասությունը ի սկզբանե տարածվում էին Արևմտյան Հայաստանի վրա: Ապրիլի 28-ին ընդունվել է Կանոնադրություն, որը դարձրել են Վերսալի պայմանագրի մաս: Իրավիճակը բարդացել է 1919թ. նոյեմբերի 19-ից, երբ Հայաստանի հնարավոր մանդատեր՝ ԱՄՆ-ը, չի վավերացրել վերսալյան տեքստը: Այնուհետև՝ 1920թ., Լոնդոնի կոնֆերան-

սուն, փետրվարի 27-ի նիստից սկսած, ԱՄՆ-ի բացակայությունն ու եվրոպացիների անգործությունը սկսել են քողարկել Լիզայով, որին հասցեագրում էին Հայաստանի չլուծվող խնդիրներ՝ բանակի կազմավորում, ֆինանսների հայթայթում, կամավորների հավաքագրում: Նկատենք. եթե 1919թ. պատկերացումով, որևէ մեկ տերություն ստանձնում էր Հայաստանը Ազգերի լիգայի անունից, ապա հիմա այդ կազմակերպությունը ինքը պետք է իրականացներ ղեկավարման ու հսկողության աշխատանք:

1920թ. մարտի 12-ին, Ջ.Քերզոնի պնդմամբ, վեհաժողովի Գերագույն խորհուրդը պաշտոնապես ընդունել է այդ մոտեցումն ու դիմել է Լիգայի խորհրդին: Չորս օր հետո Ռ.Վանսիտարտը պատմել է եղելությունը հայ պատվիրակներին, իսկ մարտի 19-ին ԱՄՆ-ի Ծերակույտը երկրորդ անգամ մերժել է Վ.Վիլսոնի քաղաքականությունն ու Նախանգները դադարել են բանակցող կողմ լինելուց: Հաջորդ օրը՝ մարտի 20-ին, Հայ միացյալ պատվիրակությունը Լոնդոնի կոնֆերանսին է հանձնել մի հուշագիր, որն պարունակում էր Լիգայի պաշտոնյաների և ՀՀ՝ որպես պետության, համագործակցության կանոններ:

Լոնդոնի կոնֆերանսի ավարտին՝ ապրիլի 9-11-ին, Փարիզում տեղի է ունեցել Լիգայի խորհրդի նիստ: Այդ մարմինը պատասխանել է Դաշնակիցներին, որ հենց նրանցից են կախված այն միջոցներ ու մարդկային ուժը, որն տնօրինելու է Լիգան՝ յուրաքանչյուր տերությունից հայցում էին բանակի մեկ բրիգադ: Դրանից բացի, հարկավոր էր Բաթումի նավահանգստի ազատ ելումուտ, բաց ճանապարհներ ու ֆինանսական երաշխիքներ: Դաշնակիցները քննարկել են Լիգայի նամակը Սան Ռեմոյի ապրիլի 20-ի նիստում: Եվ այստեղ պարզվեց, որ Հայաստանը ազատագրելու համար դիվիզիաներ չկան, երզրունը հատկացնել հարկավոր չէ, և Դաշնակիցների զորքերը չեն մասնակցի նոր Հայաստանի կազմավորման: Ավելի մանրամասն. Махмурия Г.Г., Ауга Нацаи, Армянский вопрос и Республика Армения. Ер., Армагерс, 1999, с.112-115:

44. Ռոբերտ Գիլբերտ Վանսիտարտ - Անգլիայի ԱԳՆ-ի բարձրաստիճան դիվանագետ, 1919թ., Փարիզի վեհաժողովում՝ բրիտանական պատվիրակության տեխնիկական աշխատակից, 1920թ. Լոնդոնի կոնֆերանսում հանդիսացել է Հայաստանի սահմանների հարցերի ճշգրտման հանձնաժողովի անդամ: Կողմն էր երզրունը ու սևծովյան ափը Հայաստանում ներառնելուն:

45. Նկատի ունի այն տարածքը, որը գտնվում է Թուրքիայի հյուսիսարևելքում, 115 կմ. երկարություն ունեցող Պարխարի լեռների հյուսիսային լանջերի շրջանակում: Հանդիսանում է Տրապիզոնի նահանգի գավառ, որի մեջ մտնում էին Օֆ, Ռիգե, Աթնա, Խոփա գավառակները: Իրականում, Դաշնակիցները բանակցում էին ավելի մեծ՝ Տիրեբուլուց արևելք ծգվող ծովափի մասին: Համաձայն Սևրի պայմանագրի՝ (Վ.Վիլսոնի ձևակերպմամբ), նախատեսվում էր //70 այդ երկրամասը միացնել հայկական պետությանը:

Լոնդոնի կոնֆերանսում՝ 1920թ. փետրվարի 21-ին, երբ Հայաստանի սահմանային հարցերի որոշման հանձնաժողովը խնդրել է Ա.Ահարոնյանին, Պողոս Նուբարին ու Գ.Ղորղանյանին տալ սահմանագծերը

ընդունելի նկարագիրը, Գ.Ղորղանյանը այդ գիծը նույնպես սկսել է Տիրեբուլուց: Անգլիացիների փետրվարի 26-ին կազմած քարտեզով Տրապիզոնից արևելք գտնվող տարածքը պետք է հանդիսանար Բաթումի՝ որպես ապագա չեզոք գոտու մաս: Հաջորդ օրը կոնֆերանսը քննարկել է նաև Տրապիզոնից արևելք ձգվող Լազիստանում Հայաստանին ենթակա ինքնավար պետություն ստեղծելու խնդիրը:

Ապրիլի 19-ին, Սան Ռեմոյում, քննարկել են Վ.Վիլսոնի՝ հայկական Տրապիզոնի մասին առաջարկն ու վերջինիս պատասխանել, որ այդ քաղաքից զատ, Դաշնակիցները ցանկանում են Լազիստանը ընդգրկել Հայաստանի կազմում: Եվ ինչպես վկայում է մեր հ.5 փաստաթուղթը, երկու օր հետո, Լազիստան ասելով, կոնֆերանսը հասկանում էր Ռիզեյից դեպի արևելք փոխած երկրամասը: Ավելի մանրամասն տես. Ահարոնյան Ա., Նշվ.աշխ., էջ 93-94; Documents on British Foreign Policy, vol.VIII, p.33; Hovannisian R., Op.cit., p. 27, 34, 74-75; Махмурия Г.Г., Пограничные проблемы Республики Армения и британская политика, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 2007, հ.3, էջ 241-242:

46. Ըստ Ա.Ահարոնյանի, գեկուցման մեջ աղավաղվել ու չափազանցվել են հայկական կողմի պահանջները: Տես. Ահարոնյան Ա., Նշվ.աշխ., էջ 95-96:

47. Այնուամենայնիվ, երեք պատվիրակությունները ապրիլի 22-ին բանակցել են Ա.Թոփչիբաշևի կացարանում: Հանդիպման ժամանակ հայկական կողմը սահմանափակեց իր պահանջները՝ բավարարվելով երկաթուղու կառուցման համար հարկավոր հողային շերտով: Հայ պատվիրակների բոլոր ջանքերը՝ վեճի առարկա հողամասը ենթարկել ՀՀ լիիրավ իշխանությանը, ապարդյուն անցան:

48. Խոսքը Սևրի պայմանագրի հոդվ.89-92-ի մասին է, որոնք մշակվել էին Սան Ռեմոյում: Կոնֆերանսի՝ ապրիլի 19-ի որոշմամբ, թուրքական կողմը հրավիրվում էր Փարիզ, որտեղ՝ մայիսի 11-ին, նրան հանձնել են ստորագրելիք փաստաթուղթը: //-71

©

21 էջ

«Բանբեր Հայաստանի արխիվների»: Երևան, 2010, հ.1 (115), էջ 56-71: